

**ԿՈՍՏՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ (ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՂԲԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ)**

**Ձեկուցող՝ Կ.Արեյան
Քաղաքապետի առաջին տեղակալ**

1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Երևան քաղաքի թափոնների կառավարման համակարգի մոտեցումները

Գլոբալ տնտեսական զարգացումները, գիտատեխնիկական առաջընթացը, մարդու պահանջմունքների ավելացումը, բնապահպանական խնդիրները պարբերաբար նոր մարտահրավերներ են առաջացնում տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքների համար: Քաղաքային տնտեսությունների համար, մասնավորապես անցումային ժամանակահատվածը հաջողությամբ հաղթահարած և նոր զարգացող երկրներում, նոր ենթակառուցվածքների ներդրումը, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը տնտեսության բոլոր ճյուղերում գերակա խնդիրներ են հանդիսանում, որոնց ուղղությամբ ելնելով ժամանակակից տենդենցներից՝ իրականացվում են համապատասխան քայլեր: Այդպիսի բազմակողմանի լուծումներ պահանջող կարևորագույն ճյուղերից մեկը կոշտ թափոնների կառավարման համակարգն է, որի արդիականացման ուղղությամբ ներկայումս բոլոր կայուն զարգացման գործընթացներին աջակցող կազմակերպությունների կողմից վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նորագույն լուծումներ են առաջարկվում:

Կարևորելով վերոգրյալը, ինչպես նաև գիտակցելով Երևան քաղաքում կոշտ թափոնների կառավարման ոլորտում առկա հիմնախնդիրները, և որպես զագացման հեռանկար ունենալով մինչև 2025 թվականը՝ քաղաքային իշխանությունների կողմից իրականացվում են մի շարք միջոցառումներ, որոնք կփորձենք համառոտ ներկայացնել:

Այսպիսով, Երևան քաղաքի կոշտ թափոնների կառավարման համակարգում առկա հիմնախնդիրները կարելի է ամբողջացնել ստորև բերված խմբերով.

- Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման ցածր որակ,
- Քաղաքի վարչական շրջաններում ծառայությունների մատուցման իրարից տարբերվող մակարդակներ՝ շահագործվող տեխնիկայի քանակի, որակի, տեսականու, տեղադրված աղբամանների ծավալային, տարբերակված, անարդյունավետ տեղադրվածության տեսանկյունից,
- Շահագործվող տեխնիկայի ֆիզիկական մաշվածություն, ոչ մասնագիտացված աշխատակազմ, աշխատանքային վտանգավոր պայմանների առկայություն,
- Աղբահանող ընկերությունների հետ կնքվող պայմանագրերի տևողության չափազանց կարճ ժամանակահատված, ինչը խոչընդոտում է երկարաժամկետ ներդրումների իրականացումը,

- Ծառայությունների մատուցման ընթացքում վերահսկողության և մոնիտորինգի համակարգերի բացակայություն,
- Կենցաղային կոշտ թափոնների ժամանակակից աղբավայրի բացակայություն,
- Քաղաքի տարբեր հատվածներում աղբի մեծ կուտակումների առկայություն և կամայական տեղերում աղբանետումներ,
- Աղբի վերամշակման կենտրոնների բացակայություն:

Ահա սրանք են այն խնդիրները, որոնց շուրջ ներկայումս իրականացվում են քայլեր, որոնց լուծումները տեսանելի կլինեն նաև մինչև 2025 թվականը:

Երևան քաղաքում աղբահանության կանոնակարգված իրականացումը սկսվել է 2012 թվականի հունվարի 1-ից, երբ, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի կիրառումով պայմանավորված, աղբահանության ծառայությունների համար մշակվեց բնութագրեր և համախմբելով այդ ծառայությունների մատուցումը սանիտարական մաքրման հետ, կազմակերպվեցին գնման միասնական գործընթացներ, որոնց արդյունքում համապատասխան օպերատորների միջոցով իրականացվեցին ծառայությունների մատուցում՝ յուրաքանչյուր վարչական շրջանում մեկական օպերատորի միջոցով:

Նախքան «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ինչպես նաև մինչև 2012 թվականը, միայն սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումն էր իրականացվում թվով 12 համայնքային, իսկ 2009-2011 թվականների Երևան քաղաքի բյուջեների միջոցների հաշվին:

Միաժամանակ, հարկ է նշել, որ աղբահանության ծառայությունների մատուցումը կարգավորված չէր և կազմակերպվում էր մասնավոր կամ համայնքային կազմակերպությունների ու քաղաքացիների, համատիրությունների, առևտրային և ոչ առևտրային ընկերությունների միջև ուղղակի ծառայությունների պայմանագրերի կնքումով:

2012 թվականի հունվարի 1-ից սկսած «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի (ընդունված 2011 թվականի հունիսի 23-ին) ընդունումով և այնուհետև կիրառումով պայմանավորված՝ Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանվեցին աղբահանության վճարներ, որոնք հավաքագրվում և մուտքագրվում են Երևան քաղաքի բյուջե, որոնց հաշվին էլ գրեթե 50 տոկոսով փոխհատուցվում է աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների դիմաց տրամադրվող գումարները:

Իրականացնելով վերը նշված միջոցառումները, որոնք բխում էին թե օրենսդրության կիրառումից, և թե համեմատաբար որակյալ ծառայությունների մատուցման անհրաժեշտությունից, այնուամենայնիվ, Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների համակարգն ունի մի շարք խնդիրներ, մասնավորապես, ինչպես արդեն նշվեց, ունենալով թվով 12 օպերատորներ, աղբահավաքման ծառայությունների մատուցման ապակենտրոնացված համակարգը բնութագրվում է ծառայության որակական մեծ տարբերություններով:

Միաժամանակ, Երևան քաղաքում հավաքագրված աղբը տեղադրվում է հիմնականում Նուբարաշենի աղբավայրում, ինչը նույնպես գործում է անմխիթար պայմաններում, բացի այդ առաջացնելով լուրջ բնապահպանական խնդիրներ շրջակա բնակչության համար: Քաղաքային աղբավայրը շահագործվում է ոչ արդյունավետ, որն էլ ստեղծում է աղբավայրում ամրա գազերի արտանետումներ: Աղբի այրման և ստորգետնյա ջրերի վրա ազդեցության հետևանքով առաջանում են զգալի առողջապահական և բնապահպանական ռիսկեր:

Խոսելով կոշտ թափոնների կառավարման համակարգից՝ հարկ է նշել նաև աղբի վերամշակման ուղղությամբ իրականացվող քայլերի մասին, ինչը նույնպես չի իրականացվում Երևան քաղաքում, բացառությամբ ճապոնական Շիմիձու կորպորացիայի կողմից Նուբարաշենի աղբավայրում աղբի այրման գործընթացից, ինչը չի կարող դիտարկվել որպես աղբի վերամշակման ամբողջական գործընթաց, քանի որ աղբի այրումից որևէ վերականգնվող ռեսուրս չի ստացվում, ուստի անհրաժեշտ է փաստել, որ ոլորտի այս բաղադրիչը նույնպես ունի բարեփոխման լուրջ անհրաժեշտություն:


Գիտակցելով, որ Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները, ինչպես նաև աղբավայրերի վիճակը դեռևս հեռու են ժամանակակից մայրաքաղաքներում մատուցվող նմանատիպ ծառայություններից և ընդունված ստանդարտներից, ինչպես նաև վերը թվարկված խնդիրների լուծման կարևորությունը Երևանի բնակչության համար, քաղաքային իշխանությունների համար բարեփոխումների իրականացումը կոշտ թափոնների կառավարման համակարգում գերխնդիր է հանդիսանում: Մասնավորապես, հաշվի առնելով գլոբալ բնապահպանական զարգացումները, շրջակա միջավայրի պահպանության կարևորությունը, արտանետումների նվազեցումը, բնակչությանը որակյալ ծառայությունների սպասարկման անհրաժեշտությունը Երևանի քաղաքապետարանի կողմից նախաձեռնվել և իրականացվում են մի շարք քայլեր թափոնների կառավարման ոլորտում մինչև 2025 թվականը լուրջ փոփոխությունների արձանագրման ակնկալիքով:

Այսպիսով, կոշտ թափոնների կառավարման համակարգը կառավարելու և ժամանակակից աշխարհում այս ոլորտը ներկայանալի դարձնելու նպատակով Երևանի քաղաքապետարանը ոլորտի կարգավորման լուծումները տեսնում է հետևյալ բաղադրիչների իրականացման մեջ.

- Երևան քաղաքի աղբահանություն և սանիտարական մաքրում,
- Երևան քաղաքի աղբի տնօրինում,
- Երևան քաղաքի աղբավայրի կառավարում:

Երևան քաղաքի աղբահանություն և սանիտարական մաքրում.

Թվարկված խնդիրների լուծման նպատակով Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման (այդ թվում՝ ձմեռային ամիսներին) ծառայությունների կանոնակարգման համար Երևանի քաղաքապետարանի կողմից, Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակվել են ծառայությունների բնութագրերը և մասնագրերը, որոնց հիման վրա կազմակերպվել է միջազգային մրցույթ: Համաձայն ծառայությունների տեխնիկական մասնագրերի՝ ծառայությունների մատուցման համար Երևան քաղաքը բաժանվել է երկու մասի՝ արևելյան (թվով 7 վարչական շրջաններ՝ Արաբկիր, Ավան, Էրեբունի, Քանաքեռ-Զեյթուն, Նորք-Մարաշ, Նոր-Նորք և Նուբարաշեն) և արևմտյան (թվով 5 վարչական շրջաններ՝ Աջափնյակ, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ): Բաժանումը կատարվել է՝ հիմք ընդունելով արտադրվող աղբի ծավալների և առավելագույն մակերեսների համաչափությունը:



Մրցույթի արդյունքներով արդեն իսկ թվով երկու օպերատորների հետ, 2013 թվականին կնքվել են «Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմեռային ամիսներին)» ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ Երևան քաղաքի արևելյան և արևմտյան հատվածների համար: Ծառայությունների մատուցման մեկնարկը նախատեսված է 2014 թվականի տարեվերջին:

Մրցույթի կազմակերպման հիմքում դրված է եղել գնահատել յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված առաջարկների արդյունքային ցուցանիշների ապահովումը, մասնավորապես որպես արդյունքային ցուցանիշ պահանջ է դրվել ապահովել աղբահանությունը և սանիտարական մաքրման ծառայությունները, այնպես որ աղբամանների լցվածությունը լինի ոչ ավել, քան աղբամանի տարողության 80

տոկոսը, բոլոր օգտագործվող մեքենա-սարքավորումները, այդ թվում աղբամանները, պետք է լինեն Եվրոպական Միության ստանդարտներին համապատասխան, պետք է հազեցած լինեն ավտոմատ կառավարման համակարգերով, ապահովելով թափանցիկ և արդյունավետ մեխանիզմներ:



Կնքված պայմանագրերի համաձայն, ընդ որում դրանք գործելու են մինչև 2025 թվականը, Երևան քաղաքի աղբը օպերատորների կողմից պետք է հավաքվի և տեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից որոշված բեռնաթափման կետ: Օպերատորների կողմից հավաքված աղբը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը, իսկ աղբահանության ծառայությունների համար նշված օպերատորներին վճարվում է Երևան քաղաքի ամենամյա բյուջեից: Համարելով այս հարցի ուղղությամբ իրականացված աշխատանքները որպես առաջին քայլ, որի արդյունքները արդեն իսկ տեսանելի են քաղաքում և էլ ավելի զարգացած կլինեն մինչև 2025 թվականը, Երևանի քաղաքապետարանը ներկայումս մյուս երկու բաղադրիչների ուղղությամբ միաժամանակյա քայլեր է իրականացնում:

Երևան քաղաքի աղբի տնօրինում

Երևան քաղաքի աղբի տնօրինման բաղադրիչ ենթադրում է Երևան քաղաքի աղբի տնօրինման իրավունքի տրամադրում համապատասխան օպերատորին: Ենթադրվում է, որ աղբի ծավալի նվազեցումը իրականացվելու է աղբի տեսակավորման, վերամշակման կամ այլ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման միջոցով: Աղբի տնօրինման իրավունքի տրամադրման դիմաց Երևան քաղաքի բյուջե է գանձվելու է տարեկան վճար: Երևանի քաղաքապետարանը չի սահմանափակելու աղբի ծավալի նվազեցման նպատակով աղբի տնօրինման մեթոդների ընտրության եղանակները: Մրցույթի հիմքում կրկին դնելով ցանկալի արդյունքների ապահովումը, նախատեսվում է մինչև 2025 թվականը նվազագույնը թվով 2 նմանատիպ կենտրոն ունենալ Երևան քաղաքում, որոնք էապես կփոխեն Երևան քաղաքում աղբի կառավարման մշակույթն ու

միջավայրը: Չի բացառվում նաև ունենալով բարձրակարգ աղբահանության համակարգ, ինչպես նաև աղբի տնօրինման նմանատիպ կենտրոններ, նոր մշակույթ ձևավորելու շնորհիվ իրականացվի աղբի նախնական տեսակավորում, աղբահանության օպերատորների հետ միասին:



Երևան քաղաքի աղբավայրի կառուցում

Կոշտ թափոնների կառավարման համակարգի շղթան ամբողջական դարձնելու նպատակով մինչև 2025 թվականը նախատեսվում է Երևան քաղաքում Նուբարաշենի աղբավայրի տարածքում ունենալ ժամանակակից նոր աղբավայր՝ միաժամանակ մեկուսացնելով ներկայումս գործող աղբավայրը: Այս նպատակով այժմ Վերակառուցման և զարգացման Եվրոպական Բանկի հետ բանակցությունների փուլն արդեն իսկ ավարտվել է, և առավել գործնական փուլ է մտել, մասնավորապես նախատեսվում է գրանտային և վարկային միջոցների հաշվին աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման աշխատանքները սկսել 2016 թվականից և աշխատանքների իրականացումը փուլերով իրականացնել մինչև 2025 թվականը:



2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՇԵՌԱՑՈՒՄ

Մայրաքաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգն ունի երկար տարիների պատմություն և շատ բարդ կառուցվածք: Ունենալով երկար տարիների պատմություն՝ համակարգն ունի ծանրագույն խնդիրներ: Ուսումնասիրելով միայն ջրամատակարարման քաղաքային բաշխիչ ցանցի և ջրահեռացման համակարգի կառուցման տարեթվերը՝ ակնհայտ է դառնում դրանց ֆիզիկական և բարոյական մաշվածության աստիճանը:

1990-ականների սկզբներին չկար ջրամատակարարման ցանցի լիարժեք քարտեզ, ջրային կորուստները բազմապատիկ գերազանցում էին բաժանորդին մատակարարված ջրի ծավալը:

Իրավական առումով՝ համակարգում ջրամատակարարի և բաժանորդի միջև հարաբերություններ, ըստ էության, գոյություն չունեին: Ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման մակարդակը ցածր էր, մոտ 10%: Համակարգի գործունեության ապահովման համար պետությունը ստիպված էր հատկացնել տարեկան մինչև 2 մլրդ դրամ:

Ջրամատակարարումը իրականացվում էր անկանոն գրաֆիկով, և բնակչության մեծ մասը ջուր էր ստանում օրական ընդամենը մի քանի ժամ: Ջրի աղբյուրներից ստացվում էր պահանջվածից մոտ 2 անգամ ավելի շատ ջուր, սակայն ջրամատակարարման ժամանակացույց, որպես այդպիսին, գոյություն չունեի:


Ստեղծված իրավիճակը բարելավելու և ներդրումային միջոցներ ներգրավելու նկատառումով՝ 1998թ.-ին Հայաստանի կառավարությունն ու Համաշխարհային բանկը (ՀԲ) ստորագրեցին Համայնքային զարգացման ծրագրի իրականացման համաձայնագիր: Ծրագրի բաղադրիչներից մեկն էր Երևանում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների՝ կատարողական ցուցանիշների վրա հիմնված Կառավարման պայմանագիրը, որը ստորագրվեց 2000թ. փետրվարին և ուժի մեջ մտավ 2000թ. մայիսին:

Պայմանագիրը ավարտվեց, մեկամյա երկարացումից հետո, 2005թ. ապրիլին:

Երևանի ջրամատակարարման համակարգում հետագա բարեփոխումների իրականացման համար ՀՀ Կառավարությունը և «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (ԵՋ ՓԲԸ) 2005թ. դեկտեմբերի 14-ին ստորագրեցին Վարձակալության պայմանագիր՝ տասը տարով: Այս պայմանագիրը մեկնարկեց 2006թ. հունիսի 1-ին: Պայմանագրի համար վարկային միջոցներ հատկացվեցին Համաշխարհային բանկի կողմից:

Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին նախատեսվում է ջրամատակարարման շարունակականությունը 2016թ.-ին հասցնել 23 ժամի և ապահովել ջրի միկրոկենսաբանական համապատասխանությունը միջազգային ընդունված չափանիշներին 95%-ով:

Ջրամատակարարման շարունակականությունը (%)



Մայրաքաղաքը սնվում է 10 աղբյուրներից, որոնք իրենց կապտածային կառույցներով, արտեզյան և խորքային հորերով, պոմպակայաններով կազմում են մեկ ամբողջություն: Որոշ դեպքերում դրանք լրացվում են ջրհորներից ստացվող ջրով: Ներկայումս, իրականացված ներդրումների արդյունքում որպես ձեռքբերում՝ քաղաք մատակարարվող ջրի մոտ երկու երրորդը առաքվում է ինքնահոսով: Պոմպով մղվող ջրի մեծ մասը ստացվում է արտեզյան հորերից սնվող պոմպակայաններից:

Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացման հիմնախնդիրներն են՝

- Ջրային համակարգերը կառավարող գործող օբյեկտիվային դաշտի բարելավման անհրաժեշտությունը, որը կնպաստի ոլորտի հետագա զարգացմանն ու առկա խնդիրների լուծմանը
- Սպառող-մատակարար պայմանագրային կողմերի փոխհարաբերությունների կարգավորման բացակայությունը՝ սահմանազատման կետի հստակեցումը
- Ներքին ցանցերի սպասարկման խնդիրները
- Ջրաչափական սարքերի կառավարման մոդելի փոփոխության անհրաժեշտությունը.
 - Ներկրվող ջրաչափական սարքերի տեխնիկական պարամետրերի հաստատում
 - Ներկրվող ջրաչափերի որակի նկատմամբ վերահսկողություն
 - Սահմանված ծառայությունների ժամկետների վերանայում (5-ը հետաձգվել է մինչև 12 տարի ժամկետ, մինչդեռ արտադրող գործարանի սահմանված ժամկետը 5-6 տարի է)
 - Չափաբերման և ստուգաչափման, անձնագրերի դուրս գրման ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության սահմանում

- Ջրաչափական սարքերի սեփականության իրավունքի փոփոխություն, ներառելով ծախսերը գործող սակագնում:

Վերոհիշյալ կետերը խիստ կարևոր են համակարգի բնականոն աշխատանքի համար, քանի որ 2015թ-ին լրանում է նախկինում տեղադրված և մի քանի անգամ երկարաձգված ծառայության ժամկետը շուրջ 310,000 հատ ջրաչափական սարքի համար:

Ոլորտի բարելավման համար անհրաժեշտ քայլերն են.

- Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կապիտալ նորոգման աշխատանքներ, դրա համար անհրաժեշտ ներդրումների ներգրավում՝ ջրամատակարարման ծառայությունների բարելավման և ջրի որակի վատթարացման ռիսկի նվազեցման, ջրի կորուստների ու ապօրինությունների վերացման նպատակով
- Երևան քաղաքի կոյուղու ցանց չունեցող թաղամասերի կոյուղացում՝ շրջակա միջավայրը աղտոտումից պաշտպանելու և սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու նպատակով
- Բազմաբնակարան շենքերի բակային կոյուղու համակարգի վերակառուցում, կապիտալ վերանորոգում՝ խցանումների առաջացումն ու կոյուղաջրերի արտահոսքը կանխելու նպատակով,
- Անձրևաջրերի հեռացման համակարգերի վերակառուցում, դրանց հզորացում՝ հեղեղաջրերի արտահոսքը կանխելու, թաղամասերում հեղեղումներից խուսափելու և կոյուղու համակարգ դրանց ներթափանցումը չթույլատրելու նպատակով
- Անձրևացման համակարգեր չունեցող փողոցներում և թաղամասերում դրանց կառուցում, ինչպես նաև Երևանի քաղաքաշինության զարգացմանը զուգընթաց հեղեղատար համակարգի ընդլայնման կապիտալ աշխատանքների իրականացում՝ հեղեղումներից խուսափելու նպատակով:
- Շուրջօրյա (24-ժամյա) անընդհատ ջրամատակարարման ապահովում
- Կեղտաջրերի մաքրման «Աերացիա» կայանի վերակառուցում և վերագործարկում: